# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՑՔԱԿԱԼՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/20»

ք. Երևան «15» 04 2026թ.

«Երևանի Ջեկ» ՓԲԸ-ը ի դեմս գլխավոր տնօրենի ժ/պ Գ. Պողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Վ. Քեսոյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժ և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3 120 900 (երեք միլիոն հարյուր քսան հազար ինը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[1] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

«Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

---

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,13 (զրո ամբողջ տասներեք) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի

---

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6

8.7

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Վաճառողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում գնորդը վճարումներն իրականացնելիս ապահովի վաճառողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում գնորդը պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է գնորդի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը[3]

______________________

8.13 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3,N 3.1 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ԳՆՈՐԴ**

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրենի ժ/պ-----------------Գ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչար 41
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510035491290100
ՀՎՀՀ 00259573

Տնօրեն--------------------------Վ. Քենոյան
/ստորագրություն/
Կ.Տ

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 15 » 09 2026 թ. կնքված
«ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/20» ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը և արտադրողի անվանումը, մոդել | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գին/ՀՀ դրամ | ընդհանուր գին/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | 44441200 | Առանցքակալ N 6228C3 | SKF 6228/C3 | Տիպը՝ 6228/C3<br>Սահմանային պտտման հաճախականությունը՝ պտտ/րոպ 3400<br>Նոմինալ դինամիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 165<br>Նոմինալ ստատիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 150<br>Քաշը՝ 7,79 կգ: | հատ | 185 800 | 371 600 | 2 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 2 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում: |
| 2 | 44441200 | Առանցքակալ N 6226C3 | SKF 6226/C3 | Տիպը՝ 6226/C3<br>Սահմանային պտտման հաճախականությունը՝ պտտ/րոպ 3600<br>Նոմինալ դինամիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 156<br>Նոմինալ ստատիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 132<br>Քաշը՝ 5,85 կգ: | հատ | 163 800 | 327 600 | 2 | | 2 | |
| 3 | 44441200 | Առանցքակալ N 6316C3 | SKF 6316/C3 | Տիպը՝ 6316/C3<br>Սահմանային պտտման հաճախականությունը՝ պտտ/րոպ 5300<br>Նոմինալ դինամիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 130<br>Նոմինալ ստատիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 86,5<br>Քաշը՝ 3,54 կգ: | հատ | 50 200 | 100 400 | 2 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 2 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4 | 44441200 | Առանցքակալ N 6320C3 | SKF 6320/C3 | Տիպը՝ 6320/C3<br>Սահմանային պտտման հաճախականությունը՝ պտտ/րոպ 4300<br>Նոմինալ դինամիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 174<br>Նոմինալ ստատիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 140<br>Քաշը՝ 7,1 կգ: | հատ | 111 700 | 335 100 | 3 | | 3 | պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում: |
| 5 | 44441200 | Առանցքակալ N 6213C3 | SKF 6213/C3 | Տիպը՝ 6213/C3<br>Սահմանային պտտման հաճախականությունը՝ պտտ/րոպ 7500<br>Նոմինալ դինամիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 58,5<br>Նոմինալ ստատիկ բեռնվածքի հզորությունը՝ Cr [kN] 40,5<br>Քաշը՝ 1 կգ: | հատ | 18 000 | 36 000 | 2 | | 2 | |
| 6 | 44441200 | Առանցքակալ 6322 գնդիկավոր | SKF 6322 | Ներքին տրամագիծը՝ d: 110 մմ, Արտաքին տրամագիծը՝ D: 240 մմ, Լայնություն՝ H: 50 մմ, Հպման անկյունը՝ 40 Պտտման հաշվարկային արագություն ՝ 6000 պտ/ր, Պտտման սահմանային արագություն՝ 3800 պտ/ր Դինամիկ բեռնվածությունը՝ C 203 KN, Ստատիկ բեռնվածություն՝ Co 180 KN, Նվազագույն բեռնվածության գործակից՝ kr 0.03, Հաշվարկային գործակից՝ fo 13.1, Հենարանի տրամագիծը իրանի մեջ՝ Da max 226 մմ, Հենարանի՝տրամագիծը լիսեռի վրա՝ da min 124 մմ, Քաշը՝ -9,66 կգ: | հատ | 242 100 | 484 200 | 2 | | 2 | |
| 7 | 44441200 | Առանցքակալ NU322ECP | SKF NU322 ECP | Ներքին տրամագիծը՝ d: 110 մմ, Արտաքին տրամագիծը՝ D: 240 մմ,<br>Լայնություն՝ H: 50 մմ,<br>Պտտման հաշվարկային արագություն ՝ 3000 պտ/ր,<br>Պտտման սահմանային արագություն՝ 3400 պտ/ր,<br>Դինամիկ բեռնվածությունը՝ C: 530 KN,<br>Ստատիկ բեռնվածություն՝ CO 540 KN,<br>Նվազագույն բեռնվածության գործակից՝ kr 0.15,<br>Սահմանային արժեք՝ e 0.2, Հաշվարկային գործակից՝ Y 0.6,<br>Հենարանի տրամագիծը իրանի մեջ՝ Da max 225,2 մմ,<br>Հենարանի տրամագիծը լիսեռի վրա՝ da min 124 մմ,<br>Քաշը՝ 10,3 կգ: | հատ | 273 600 | 547 200 | 2 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 2 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 75 օրացուցային օրվա ընթացքում: |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 44441200 | Առանցքակալ 7306 BECBP գնդիկավոր | SKF 7306 BECBP | Ներքին տրամագիծը՝ d: 30 մմ, Արտաքին տրամագիծը՝ D: 72 մմ, Լայնություն՝ H: 19 մմ, Պտտման հաշվարկային արագություն՝ 12000 պտ/ր Պտտման սահմանային արագություն՝ 13000 պտ/ր Դինամիկ բեռնվածությունը՝ C 35.5 KN, Ստատիկ բեռնվածություն՝ Co 21.2 KN, Նվազագույն բեռնվածության գործակից՝ kr 0.1, Հենարանի տրամագիծը իրանի մեջ՝ Da max 65 մմ, Հենարանի՝տրամագիծը լիսեռի վրա՝ da min 37 մմ, Քաշը՝ 0,331 կգ: | հատ | 26 600 | 106 400 | 4 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 4 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացույցային օրվա ընթացքում: |
| 9 | 44441200 | Առանցքակալ 7308 BECBJ գնդիկավոր | SKF 7308 BECBJ | Ներքին տրամագիծը՝ d: 40 մմ, Արտաքին տրամագիծը՝ D: 90 մմ, Լայնություն՝ H: 23 մմ, Հպման անկյունը՝ 40 Պտտման հաշվարկային արագություն՝ 9500 պտ/ր, Պտտման սահմանային արագություն՝ 10000 պտ/ր Դինամիկ բեռնվածությունը՝ C 50KN, Ստատիկ բեռնվածություն՝ Co 32.5 KN, Նվազագույն բեռնվածության գործակից՝ kr 0.1, Հենարանի տրամագիծը իրանի մեջ՝ Da max 81 մմ, Հենարանի՝տրամագիծը լիսեռի վրա՝ da min 49 մմ, Քաշը՝ 0,654 կգ: | հատ | 38 800 | 388 000 | 10 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 10 | |
| 10 | 44441200 | Առանցքակալ՝ փակ, YAR-207-2F, ամրացվող գնդիկավոր | SKF YAR-207-2F, | Մակնիշավորում՝ YAR-207-2F; Ներքին (նստեցման) տրամագիծը՝ 35 մմ; Արտաքին տրամագիծը՝ 72 մմ; Ներքին օղակի լայնքը՝ 42,9 մմ; Ստատիկ բեռնվածություն՝ >=15,4 կՆ; Դինամիկ բեռնվածություն՝ >=25,5 կՆ; Քաշը՝ 0,46 կգ: | հատ | 14 600 | 116 800 | 8 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 8 | |
| 11 | 44441200 | Առանցքակալ՝ փակ,YAR-205-2F, ամրացվող գնդիկավոր | SKFYAR-205-2F, | Մակնիշավորում՝ YAR-205-2F; Ներքին (նստեցման) տրամագիծը՝ 25 մմ; Արտաքին տրամագիծը՝ 52 մմ; Ներքին օղակի լայնքը՝ 34,1 մմ; Ստատիկ բեռնվածություն՝ >=14,0 կՆ; Դինամիկ բեռնվածություն՝ >=6,65 կՆ; Քաշը՝ 0,19 կգ: | հատ | 9900 | 158 400 | 16 | | 16 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12 | 44441200 | Առանցքակալ 7307 BECBY գնդիկավոր | SKF 7307 BECBY | Մակնիշավորում՝ 7307 BECBY; Ներքին (նստեցման) տրամագիծը՝ 35 մմ; Արտաքին տրամագիծը՝ 80 մմ; Լայնքը՝ 21 մմ; Ստատիկ բեռնվածություն՝ >=26,5 կՆ; Դինամիկ բեռնվածություն՝ >=41,5 կՆ; Քաշը՝ ≈0,5 կգ: | հատ | 44 300 | 88 600 | 2 | | 2 | պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում: |
| 13 | 44441200 | Առանցքակալ գնդիկավոր | SKF 6307 | Մակնիշավորում՝ 6307; Ներքին (նստեցման) տրամագիծը՝ 35 մմ; Արտաքին տրամագիծը՝ 80 մմ; Լայնքը՝ 21 մմ; Ստատիկ բեռնվածություն՝ >=19 կՆ; Դինամիկ բեռնվածություն՝ >=35,1 կՆ; Քաշը՝ ≈0,47 կգ: | հատ | 6 600 | 6 600 | 1 | ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբ., թիվ 3 | 1 | |
| 14 | 44423652 | Առանցքակալի նստեցման ռեզինե օղակ RIS 207A | SKF RIS 207A | Մակնիշավորում՝ RIS 207 A; Ներքին (նստեցման) տրամագիծը՝ 71,8 մմ; Արտաքին տրամագիծը՝ 80,3 մմ; Ներքին (նստեցման) լայնքը՝ 19,0 մմ; Արտաքին լայնքը՝ 23 մմ; Քաշը՝ ≈0,03 կգ: | հատ | 3200 | 32 000 | 10 | | 10 | |
| 15 | 4442365 | Առանցքակալի նստեցման ռեզինե օղակ RIS 205 | SKF RIS 205 | Մակնիշ՝ RIS 205; Ներքին (նստեցման) տրամագիծը՝ 51,8 մմ; Արտաքին տրամագիծը՝ 62,3 մմ; Ներքին (նստեցման) լայնքը՝ 15,0 մմ; Արտաքին լայնքը՝ 20,5 մմ; Քաշը՝ ≈0,03 կգ : | հատ | 2200 | 22 000 | 10 | | 10 | |

***Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ աշխատում է ISO 9002015, ISO 14002015 և ISO 37002016 ստանդարտների պահանջներին համապատասխան:***

**ԳՆՈՐԴ**

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028
գլխավոր տնօրենի ժ/պ Գ. Պողոսյան

-------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչար 41
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510035491290100
ՀՎՀՀ 00259573

Տնօրեն-------------------Վ. Քեսոյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 15 » 04 2026թ. կնքված
«ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-26/20» ծածկագրով պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 44441200 | Առանցքակալ N 6228C3 | - | - | - | - | - | 371 600 | 371 600 | 371 600 | 371 600 | 371 600 | 371 600 | 371 600 | 371 600 |
| 2 | 44441200 | Առանցքակալ N 6226C3 | - | - | - | - | - | 327 600 | 327 600 | 327 600 | 327 600 | 327 600 | 327 600 | 327 600 | 327 600 |
| 3 | 44441200 | Առանցքակալ N 6316C3 | - | - | - | - | - | 100 400 | 100 400 | 100 400 | 100 400 | 100 400 | 100 400 | 100 400 | 100 400 |
| 4 | 44441200 | Առանցքակալ N 6320C3 | - | - | - | - | - | 335 100 | 335 100 | 335 100 | 335 100 | 335 100 | 335 100 | 335 100 | 335 100 |
| 5 | 44441200 | Առանցքակալ N 6213C3 | - | - | - | - | - | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 | 36 000 |
| 6 | 44441200 | Առանցքակալ 6322 գնդիկավոր | - | - | - | - | - | 484 200 | 484 200 | 484 200 | 484 200 | 484 200 | 484 200 | 484 200 | 484 200 |
| 7 | 44441200 | Առանցքակալ NU322ECP | - | - | - | - | - | 547 200 | 547 200 | 547 200 | 547 200 | 547 200 | 547 200 | 547 200 | 547 200 |

| | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | 44441200 | Առանցքակալ 7306 BECBP գնդիկավոր | - | - | - | - | - | 106 400 | 106 400 | 106 400 | 106 400 | 106 400 | 106 400 | 106 400 | 106 400 |
| 9 | 44441200 | Առանցքակալ 7308 BECBJ գնդիկավոր | - | - | - | - | - | 388 000 | 388 000 | 388 000 | 388 000 | 388 000 | 388 000 | 388 000 | 388 000 |
| 10 | 44441200 | Առանցքակալ՝ փակ, YAR-207-2F, ամրացվող գնդիկավոր | - | - | - | - | - | 116 800 | 116 800 | 116 800 | 116 800 | 116 800 | 116 800 | 116 800 | 116 800 |
| 11 | 44441200 | Առանցքակալ՝ փակ,YAR-205-2F, ամրացվող գնդիկավոր | - | - | - | - | - | 158 400 | 158 400 | 158 400 | 158 400 | 158 400 | 158 400 | 158 400 | 158 400 |
| 12 | 44441200 | Առանցքակալ 7307 BECBY գնդիկավոր | - | - | - | - | - | 88 600 | 88 600 | 88 600 | 88 600 | 88 600 | 88 600 | 88 600 | 88 600 |
| 13 | 44441200 | Առանցքակալ գնդիկավոր | - | - | - | - | - | *6 600* | *6 600* | *6 600* | *6 600* | *6 600* | *6 600* | *6 600* | *6 600* |
| 14 | 44423652 | Առանցքակալի նստեցման ռեզինե օղակ RIS 207 A | - | - | - | - | - | 32 000 | 32 000 | 32 000 | 32 000 | 32 000 | 32 000 | 32 000 | 32 000 |
| 15 | 44423652 | Առանցքակալի նստեցման ռեզինե օղակ RIS 205 | - | - | - | - | - | 22 000 | 22 000 | 22 000 | 22 000 | 22 000 | 22 000 | 22 000 | 22 000 |

**ԳՆՈՐԴ**

Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն ՓԲԸ
ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3
Արդշինբանկ ՓԲԸ, Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 2473600002170010
ՀՎՀՀ 02205028

գլխավոր տնօրենի ժ/պ---------------------Գ. Պողոսյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԷՆԵՐՍԻՍ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Հր. Քոչար 41
«Արարատ բանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510035491290100
ՀՎՀՀ 00259573

Տնօրեն--------------------------Վ. Քեսոյան
/ստորագրություն/
Կ.Տ